ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 31.07.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2020/81

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Բողոքաբեր՝ «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ

Մասնակցությամբ՝
«Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի ներկայացուցիչներ՝ Հ. Ենգոյանի, Ա. Պարանյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/88» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, կրթական օբյեկտների (Երեվանի թիվ 105, Երևանի թիվ 94, Վանաձորի թիվ 17, Գյումրու թիվ 26, Տաշիրի, Իջևանի ավագ դպրոցներ) հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 08.07.2020թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է դադարեցնել «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/88» ընթացակարգի ծածկագրով «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 08.07.2020թ.-ին:

09.07.2020թ.-ին կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/81 համարի ծածկագիրը և հրապարակվել է www.gnumner.am կայքում:

16.07.2020թ.-ին, 24.07.2020թ.-ին, 29.07.2020թ.-ին և 31.07.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Բողոքի քննությունն ավարտվել է 29.07.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 31.07.2020թ.-ին:

2. «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ն 08.07.2020թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ն 2020թ. հունիսի 17-ին էլեկտրոնային գնումների Armeps համակարգի միջոցով մասնակցել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/88 ընթացակարգի ծածկագրով հայտարարված գնանշման հարցմանը՝ 1-ին չափաբաժնով («Տաշիրի Արտակ Խաչատրյանի անվան ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի սանհանգույցների և տանիքի (այդ թվում ինժեներական կոմունիկացիաների և շինարարական էլեմենտների) հիմնանորոգման և նորերի կառուցման աշխատանքներ):

Ընկերությունը 1-ին չափաբաժնի համար առաջարկել է 45,162,245.88 ՀՀ դրամ ընդհանուր գին, որից՝ 30,860,868.01 ՀՀ դրամը ինքնարժեք, 6,774,336.88 ՀՀ դրամը շահույթ, 7,527,040.98 ՀՀ դրամը ԱԱՀ:

ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/88 ծածկագրով գնահատող հանձնաժողովի 17.06.2020թ-ի նիստի թիվ 2 արձանագրության 7.10 կետով արձանագրվել է Ընկերության կողմից ներկայացված հայտի անհամապատասխանություն հրավերով սահմանված պահանջներին,

մասնավորապես՝ ծավալաթերթ-նախահաշվում, ինչպես նաև Հավելված 2՝ գնային առաջարկում ներկայացված մոտ 22% շահույթի չափը գերազանցում է հրավերով նախատեսված և քաղաքաշինական նորմերով՝ ՀՀ կառավարության 23.06.2011թ-ի թիվ 879-Ն որոշմամբ սահմանված չափը:

Նշված արձանագրության հիման վրա գնահատող հանձնաժողովը 03.07.2020թ-ին հրապարակել է հայտարարություն ՀՀԿԳՄՄՆԳՀԱՇՁԲ-20/88 ընթացակարգի ծածկագրով պայմանագիր կնքելու որոշման մասին, որում 1-ին չափաբաժնով հաղթող է ճանաչվել «Զեթ-Պրոֆիլ» ՍՊԸ, իսկ Ընկերության հայտը համարվել է հրավերի պահանջներին չհամապատասխանող:

Գտնում ենք, որ գնահատող հանձնաժողոցի ՀՀԿԳՄՄՆԳՀԱՇՁԲ-20/88 ընթացակարգի ծածկագրով պայմանագիր կնքելու որոշումը ենթակա է վերացման հետևյալ հիմնավորմամբ և պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 9-րդ կետերի համաձայն՝ 1. Հրավերը պետք է պարունակի՝

3) հայտերի պատրաստման հրահանգները.

9) հայտով ներկայացվող գնի հաշվարկման կարգը, ներառյալ՝ գինը արտարժույթով ներկայացվելու դեպքում դրա փոխարժեքը:

«Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին ՀՀ Կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն» որոշման 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ 2) մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման:

Նշված իրավակարգավորումներից հետևում է, որ Ընկերությունը կարող էր գնային առաջարկը ներկայացնել արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ԱԱՀ ընդհանրական հաշվարկի ձևով, սակայն քանի որ Պատվիրատուն հրավերի

Հավելված 2՝գնային առաջարկի ձևանմուշը հրավերում սահմանել էր շահույթի առանձին դաշտի նշմամբ, ուստի Ընկերությունը գնային առաջարկի հաշվարկը ներկայացրել է ըստ Հավելված 2 գնային առաջարկի լրացման հրահանգների, որի դեպքում էլ Պատվիրատուն առանձնացրել է Ընկերության գնային առաջարկում հաշվարկված շահույթի չափը:

Պատվիրատուն խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 9-րդ կետերը, քանի որ հրավերի լրացման հրահանգներում նախատեսել է Հավելված 2 գնային առաջարկը հին խմբագրությամբ, այն դեպքում, երբ «ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության 21 մայիսի 2020 թվականի N 778-Ն որոշմամբ Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետը շարադրվել է նոր խմբագրությամբ, որի հիման վրա հաստատվել է հրավերի օրինակելի ձևը, որում Հավելված 2 գնային առաջարկը նախատեսված է նոր լրացման հրահանգով, այն է՝ արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Վերընշված փոփոխությունները ուժի մեջ են մտել 06.06.2020թ-ին, իսկ ՀՀԿԳՄՄՆԳՀԱՇՁԲ-20/88 ընթացակարգի ծածկագրով գնանշման հարցման մասին հայտարարությունը հաստատվել է գնահատող հանձնաժողովի 2020 թվականի հունիսի 9-ի որոշմամբ, երբ փոփոխություններն արդեն ուժի մեջ էին:

Կարգի 52-րդ կետի 2-դ ենթակետի հանմաձայն՝ «Եթե պայմանագրի գինը կայուն է, ապա՝

2) մասնակցի շահույթի չափը չի կարող հրավերով սահմանափակվել»:

Նշվածից հետևում է, որ Պատվիրատուն չէր կարող հրավերով սահմանափակել մասնակցի շահույթի չափը, Ընկերությունը գնային առաջարկում ներկայացրել է 22% շահույթ, որը որևէ իրավական ակտով սահմանափակված չէ և շահույթ հետապնդող առևտրային կազմակերպությունը ինքն է որոշում համապատասխան աշխատանքների կատարման համար կանխատեսվող իր շահույթի չափը:

Անհիմն է հանձնաժողովի մեկնաբանությունը, քանի որ Կարգի 52-րդ կետի 2-դ ենթակետի ուժով մասնակցի շահույթի չափը չի կարող սահմանափակվել:

Գնահատող հանձնաժողովը արձանագրության 7.10 կետում անհաապատասխանության վերաբերյալ նշումներում մեջբերել է ՀՀ կառավարության 23.06.2011թ-ի թիվ 879-Ն որոշումը և համարել, որ Ընկերության ներկայացրած շահույթի

չափը գերազանցում է այդ որոշմամբ սահմանված առավելագույն չափը, ուստի Ընկերության հայտը համարել է հրավերի պահանջներին չհամապատասխանող:

ՀՀ կառավարության 23.06.2011թ-ի թիվ 879-Ն որոշումն ընդունվել է «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ կետին և 23-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան, որտը սահմանում է պետական մարմինների կողմից շինարարական աշխատանքների արժեքի հաշվարկման կարգ, որը չի կարող պարտադիր լինել մասնավոր անձանց համար, ավելին՝ հրավերով գնանշման հարցման մասնակցի համար:

Ամփոփելով փաստում ենք, որ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/88 ընթացակարգի ծածկագրով գնահատող հանձնաժողովի պայմանագիր կնքելու որոշումը կայացվել է վերընշված օրեքների խախտումներով:»:

Վերոգրյալով պայմանավորված, «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է դադարեցնել «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/88» ընթացակարգի ծածկագրով «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

Ընկերությունը ներկայացրած բողոքի լրացմամբ հայտնել է նաև հետևյալը.

««Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Օրենքի 28-րդ հողվածի 1-ին մասի 3-րդ և 9-րդ կետերի համաձայն՝ հրավերը պետք է պարունակի՛

3) հայտերի պատրաստման հրահանգները.

9) հայտով ներկայացվող գնի հաշվարկման կարգը, ներառյալ գինը արտարժույթով ներկայացվելու դեպքում դրա փոխարժեքը:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվում, եթե հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին:

«Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման (այսուհետ նաև՝ Կարգ) 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ եթե գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ...:

Կարգի 51-րդ կետի համաձայն՝ պայմանագրի գինը կայուն է, եթե պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում, ապրանքները մատակարարվում և ծառայությունները մատուցվում են մինչև երեք տարվա ընթացքում: Եթե հրավերում և պայմանագրում նշված չէ, որ պայմանագրի գինը գործոնային է, ապա պայմանագրի գինը համարվում է կայուն՝ անկախ պայմանագրի կատարման ժամկետից:

Կարգի 52-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերի համաձայն՝ եթե պայմանագրի գինը կայուն է, ապա մասնակցի շահույթի չափը չի կարող հրավերով սահմանափակվել, ինչպես նաև պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (ընտրված մասնակցի կամ պատվիրատուի) օգուտները (խնայողությունները) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

«Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի թիվ 526-Ն որոշման 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն (կետը վերաշարադրվել է ՀՀ կառավարության 21 մայիսի 2020 թվականի N 778-Ն որոշմամբ և ուժի մեջ մտել 06.06.2020թ.)՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի ե կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու

համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման:

Գտնում ենք, որ «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/88» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, մերժելով «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը այն հիմնավորմամբ, որ հայտով ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ Հավելված 2 գնային առաջարկում ներկայացված 22% շահույթի չափը գերազանցում է հրավերով նախատեսված և քաղաքաշինական նորմերով՝ ՀՀ կառավարության 23.06.2011թ. թիվ 879-Ն որոշմամբ հաստատված "Գործող գներով շինարարական աշխատանքների արժեքի հաշվարկման կարգի" 25-րդ կետով սահմանված՝ ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող շինարարության համար առավելագույն 11 %-ը, գործել է որ իրավաչափ հետևյալ հիմնավորմամբ.

ա) Նախ, ինչպես արդեն նշել ենք, Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը իմպերատիվ պահանջում է, որպեսզի բավարար գնահատվեն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, և մերժվեն միայն այն հայտերը, որոնք չեն համապատասխանում հրավերի պահանջներին:

Ավելին, Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվում, եթե հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին:

Միևնույն ժամանակ, Կարգի 52-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերի համաձայն՝ եթե պայմանագրի գինը կայուն է, ապա մասնակցի շահույթի չափը չի կարող հրավերով սահմանափակվել, ինչպես նաև պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (ընտրված մասնակցի կամ պատվիրատուի) օգուտները (խնայողությունները) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ Ընթացակարգի հրավերը չի պարունակում որևէ պահանջ առ այն, որ գնային առաջարկում ներկայացված շահույթը չպետք է գերազանցի 11 %-ը: Մինչդեռ, Օրենքի 28-րդ հողվածի 1-ին մասի 3-րդ և 9-րդ կետերի համաձայն՝ հրավերը պետք է պարունակի՝ 3) հայտերի պատրաստման հրահանգները, 9) հայտով ներկայացվող գնի հաշվարկման կարգը, ներառյալ գինը արտարժույթով ներկայացվելու դեպքում դրա փոխարժեքը:

Ավելին, Ընթացակարգի հրավերի 5.3-րդ կետը իմպերատիվ սահմանում է, որ մասնակցի շահույթի չափը չի կարող հրավերով սահմանափակվել:

Այսպիսով, Ընթացակարգի ամբողջ հրավերը, և ավելին, գնումների մասին ՀՀ օրենսդրությունը չի պարունակում որևէ դրույթ, որը սահմանափակում է մասնակցի շահույթի չափը: Հակառակը, թե գնումների մասին ՀՀ օրենսդրությունը և թե Ընթացակարգի հրավերը արգելում են սահմանափակել մասնակցի շահույթը:

Նման օրենսդրական կարգավորման և Հրավերի նման բովանդակության պայմաններում գտնում ենք, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մերժելով «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի հայտը այն հիմնավորմամբ, որ գնային առաջարկը չի համապատասխանում ՀՀ կառավարության 23.06.2011թ. թիվ 879-Ն որոշմամբ հաստատված "Գործող գներով շինարարական աշխատանքների արժեքի հաշվարկման կարգի" 25-րդ կետով սահմանված պահանջներին՝ խախտել է Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի, Կարգի 52-րդ կետի 2-ր մասի և հրավերի 5.3.-րդ կետի պահանջները:

Նշվածից հետևում է, որ Պատվիրատուն չէր կարող սահմանափակել մասնակցի շահույթի չափը. Ընկերությունը գնային առաջարկում ներկայացրել է 22% շահույթ, որը որևէ իրավական ակտով սահմանափակված չէ և շահույթ հետապնդող առևտրային կազմակերպությունը ինքն է որոշում համապատասխան աշխատանքների կատարման համար կանխատեսվող իր շահույթի չափը:

Ուստի անհիմն է հանձնաժողովի վկայակոչված մեկնաբանությունը, քանի որ Կարգի 52-րդ կետի 2-րդ ենթակետի ուժով մասնակցի շահույթի չափը չի կարող սահմանափակվել:

Պետք է փաստել, որ գնահատող հանձնաժողովի կողմից վկայակոչված ՀՀ կառավարության 23.06.2011թ. թիվ 879-Ն որոշումն ընդունվել է «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ կետին և 23-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան, որը սահմանում է պետական մարմինների կողմից շինարարական աշխատանքների արժեքի հաշվարկման կարգը, որը չի կարող պարտադիր լինել մասնավոր անձանց համար, ավելին, տարածվել գնանշման հարցման մասնակցի վրա:

Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ նույնաբովանդակ դիրքորոշում է հայտնել նաև գնումների ոլորտում լիազորված մարմինը՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը, որին ի պատասխան «Ագարակ» ԲԲԸ-ի հարցմանը (ԲԲԸ-ի կողմից նկարագրվել է իդենտիկ իրավիճակ), հղում է կատարել Կարգի նույն 52-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերի պահանջներին, որոնց համաձայն՝ եթե պայմանագրի գինը կայուն է, ապա

մասնակցի շահույթի չափը չի կարող հրավերով սահմանափակվել, ինչպես նաև պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (ընտրված մասնակցի կամ պատվիրատուի) օգուտները (խնայողությունները) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ նաև, որ գնահատող հանձնաժողովը, ըստ էության, չկարողանալով արձանագրել «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտում որևէ անհամապատասխանություն հրավերի կոնկրետ պահանջի նկատմամբ (հայտը մերժել է ՀՀ կառավարության 23.06.2011թ. թիվ 879-Ն որոշման 25-րդ կետի պահանջներին չհապատասխանելու հիմքով):

բ) Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ նաև, որ տվյալ ընթացակարգը հայտարարվել է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն: Իսկ ինչպես հայտնի է, Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ եթե գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ…:

Վերոհիշյալ նորմից ակնհայտ է դառնում, որ եթե Ընթացակարգը կազմակերպվել է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, ապա մասնակիցների հայտով ներկայացրած գնային առաջարկը, ըստ էության, վերջնական չեն, և որպես կանոն, վերանայվում է գների նվազեցման նպատակով հրավիրված միաժամանակյա բանակցությունների ընթացքում:

Ուստի եթե անգամ տեսականորեն ընդունենք, որ ներկայացված գնային առաջարկում շահույթը չպետք է գերազանցեր 11 % (չնայած մենք համաձայն չենք այս դիրքորոշման հետ), ապա գնահատող հանձնաժողովը հաշվի չի առել մի պարզ հանգամանք. ՀՀ կառավարության 23.06.2011թ. թիվ 879-Ն որոշմամբ հաստատված "Գործող գներով շինարարական աշխատանքների արժեքի հաշվարկման կարգի" 25-րդ կետը ամրագրում է, որ ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող շինարարության համար առավելագույն 11 %-ը:

Մինչդեռ Ընթացակարգը Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն կազմակերպված լինելու պայմաններում ակնհայտ է, որ մասնակիցների հայտով

ներկայացրած գնային առաջարկը, ըստ էության, վերջնական չէ, և որպես կանոն, վերանայվում են բանակցությունների փուլում:

Մինչդեռ գնահատող հանձնաժողովի կողմից վկայակոչված ՀՀ կառավարության 23.06.2011թ. թիվ 879-Ն որոշմամբ հաստատված "Գործող գներով շինարարական աշխատանքների արժեքի հաշվարկման կարգի" 25-րդ կետը վերաբերում է ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող շինարարությանը, որի համար շահույթի առավելագույն 11 %-ն է, իսկ Ընթացակարգը Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն հայտարարելու պայմաններում ակնհայտ է, որ «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի ներկայացրած գնային առաջարկը չեր կարող դիտարկվել որպես ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող շինարարության գին: Գնահատող հանձնաժողովը, ըստ իր տրամաբանության, եթե ցանկանում էր կիրառել ՀՀ կառավարության 23.06.2011թ. թիվ 879-Ն որոշման դրույթները (ինչը իրավաչափ չէ), այն պետք է կիրառեր գների նվազեցման շուրջ բանակցություններից հետո, երբ պարզ լինեին մասնակիցների կողմից ներկայացված վերջնական գները:

Եվ ի վերջո, ակնհայտ է, որ Ընթացակարգը Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն հայտարարելու պայմաններում մասնակիցները, որպես կանոն, ներկայացնում են բարձր տոկոսի շահույթ, որպեսզի բանակցությունների փուլում նվազեցնեն իրենց գնային առաջարկը՝ շահույթի հաշվին, քանի որ ինքնարժեքից նվազեցումը արգելվում է:

Գտնում ենք, որ նաև այս տրամաբանությամբ է ոչ իրավաչափ է գնահատող հանձնաժողովի որոշումը:

գ) «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը ՀՀ կառավարության 04 մայիսի 2017 թվականի թիվ 526-Ն որոշման 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն (կետը վերաշարադրվել է ՀՀ կառավարության 21 մայիսի 2020 թվականի N 778-Ն որոշմամբ և ուժի մեջ մտել 06.06.2020թ.) ՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի ե կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսուսկի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման:

Նշված իրավակարգավորումներից հետևում է, որ Ընկերությունը կարող էր գնային առաջարկը ներկայացնել արժեք (ինքնարժեքի ե կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ԱԱՀ ընդհանրական հաշվարկի ձևով, սակայն քանի որ Պատվիրատուն հրավերի Հավելված 2 գնային առաջարկի ձևանմուշը հրավերում սահմանել էր շահույթի առանձին դաշտի նշմամբ, ուստի Ընկերությունը գնային առաջարկի հաշվարկը ներկայացրել է ըստ Հավելված 2 գնային առաջարկի կազման հրահանգների, որի դեպքում էլ Պատվիրատուն առանձնացրել է Ընկերության գնային առաջարկում հաշվարկված շահույթի չափը;

Այս տեսանկյունից գտնում ենք, որ ըստ էության, Պատվիրատուն խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 9-րդ կետերը, քանի որ հրավերի լրացման հրահանգներում նախատեսել է Հավելված 2 գնային առաջարկը հին խմբագրությամբ, այն դեպքում, երբ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման մեջ փոփոխություններ և լացումներ կատարելու մասին ՀՀ կառավարության 21 մայիսի 2020 թվականի թիվ 778-Ն որոշմամբ Կարգի 32-րդ կետի 2-ըղ ենթակետի շարադրվել է նոր խմբագրությամբ, որի հիման վրա հաստատվել է հրավերի օրինակելի ձևը, որում Հավելված 2գնային առաջարկը նախատեսված է նոր լրացման հրահանգով, այն է՝ արժեք (ինքնարժեքի ե կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադիչներից բաղկացած հաշվարկի ձևով:»:

Վերոգրյալով պայմանավորված, «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/88» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում՝ «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի հայտը մերժելու մասով կայացրած որոշումը դադարեցնելու վերաբերյալ:

Ներկայացված բողոքի մեկ այլ լրացմամբ, Ընկերությունը հավելել է հետևյալը.

««ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/88» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.06.2020թ. նիստի թիվ 2 արձանագրության 7.10-րդ կետի համաձայն՝ «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես.

- Հավելված 1-ում սխալ է նշված պատվիրատուի անվանումը, բացակայում է իրական շահառու հանդիսացող անձի անուն, ազգանուն, հայրանունը, նույնականացման քարտի կամ անձնագրի կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը,

- Հավելված 2՝ գնային առաջարկում առկա է անհամապատասխանություն տառերով և թվերով նշված գումարների միջև,

- Ներկայացված ծավալաթերթ-նախահաշիվը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին՝ պահպանված չեն հրավերով պահանջված ձևաչափը, բացակայում են յուրաքանչյուր բաժնի ընդամենը գումարի չափը, ընդամենը կշիռը՝ տոկոսներով, ինչպես նաև ընդհանուր աշխատանքների ինքնարժեքի գումարը ներկայացված է որպես 3-րդ բաժնով նախատեսված աշխատանքների ընդամենը գումար,

- Ծավալաթերթ-նախահաշվով, ինչպես նաև Հավելված 2՝ գնային առաջարկով

Չափա-բաժինների համարները	Աշխատանքի անվանումը	Ինքնարժեք /տառերով և թվերով/	Շահույթ /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	2	3	4	5	6=3+4+5
1	**Կրթական օբյեկտների հիմնանորոգում-1** «Տաշիրի Արտակ Խաչատրյանի անվան ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի սանհանգույցների և տանիքի (այդ թվում ինժեներական կոմունիկացիաների և շինարարական էլեմենտների) հիմնանորոգման և նորերի կառուցման աշխատանքներ	30,860,868.01 Երեսուն միլիոն ութ հարյուր վաթսուն հազար ութ հարյուր վաթսունութ ամբողջ մեկ հազար չորս հարյուր յոթանասուներկու հարյուրհազարերորդական	6,774,336.88 Վեց միլիոն յոթ հարյուր յոթանասունչորս հազար երեք հարյուր երեսունվեց ամբողջ ութսունութ հազար հարյուր քսանութ հարյուրհազարերորդական	7,527,040.98 Յոթ միլիոն հինգ հարյուր քսանյոթ հազար քառասուն ամբողջ ինը հազար յոթ հարյուր իննսուներկու տասհազարերորդական	45,162,245.88 Քառասունհինգ միլիոն հարյուր վաթսուներկու հազար երկու հարյուր քառասունհինգ ամբողջ ութ հազար յոթ հարյուր հիսուներկու տասհազարերորդական

Նախ, Հավելված 2՝ գնային առաջարկում տառերով և թվերով նշված գումարների միջև անհամապատասխանությունը պայմանավորված է նրանով, որ թվերով գրված գումարի լումաները հարյուրերրորդականից հետո կլորացվել են (եթե 5-ից ցածր է, ապա դեպի ներքև, իսկ եթե բարձր է՝ ապա դեպի վերև), իսկ տառերով գրված գումարի ումաները գրվել են հարյուրհազարերորդականներով:

Հաշվարկը պատկերավոր ներկայացնելու համար սույն դիրքորոշմանը կից ներկայացվում է համապատասխան EXEL ֆայլով հաշվարկված գնային առաջարկի գումարը, որից պարզ է դառնում, որ տվյալ ծրագիրը հնարավորություն է տալիս արտահայտել գումարը՝ լումաների հազարերրորդական ճշտությամբ:

30,860,868.014720 Երեսուն միլիոն ութ հարյուր վաթսուն հազար ութ հարյուր վաթսունութ ամբողջ մեկ հազար չորս հարյուր յոթանասուներկու հարյուրհազարերորդական

6,774,336.881280 Վեց միլիոն յոթ հարյուր յոթանասունչորս հազար երեք հարյուր երեսունվեց ամբողջ ութսունութ հազար հարյուր քսանութ հարյուրհազարերորդական

7,527,040.97920 Յոթ միլիոն հինգ հարյուր քսանյոթ հազար քառասուն ամբողջ ինը հազար յոթ հարյուր իննսուներկու տասհազարերորդական

45,162,245.87520 Քառասունհինգ միլիոն հարյուր վաթսուներկու հազար երկու հարյուր քառասունհինգ ամբողջ ութ հազար յոթ հարյուր հիսուներկու տասհազարերորդական

Մասնավորապես,

Ինքնարժեքը՝ EXEL ծրագրով հաշվարկված 30,860,868.014720 թիվը կլորացվել է 30,860,868.01:

Շահույթը ՝ EXEL ծրագրով հաշվարկված 6,774,336.881280 թիվը կլորացվել է 6,774,336.88:

ԱԱՀ՝ EXEL ծրագրով հաշվարկված 7,527,040.97920 թիվը կլորացվել է 7,527,040.98:

Ընդհանուր գինը՝ EXEL ծրագրով հաշվարկված թիվը 45,162,245.87520 կլորացվել է 45,162,245.88:

Միևնույն ժամանակ խնդրում ենք նկատի ունենալ այն կարևորագույն փաստը, որ տառերով գրված թվերի հանրագումարը (առ լումաների հազարերրորդականների) համապատասխանում է վերջին սյունակում գրված ընդհանուր գնին: Նույնը վերաբերում է թվերով գրված գումարներին, քանի որ թվերով գրված գումարները համապատսախանում են ընդհնանուր գումար բաժնում գրված թվին:

Այս խնդիրը իրավական տեսանկյունից գնահատելու համար էական նշանակություն ունի Ընթացակարգի հրավերի 5.2. կետը, որի համաձայն՝

5.2 Մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը փվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա ներկայացվող գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:

Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն կետում նշված հարկի գումարի հաշվարկման: Ընդ որում, մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, եթե՝

ա. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակները լրացված են միայն թվերով, իսկ ընդհանուր գնի սյունակը՝ և տառերով և թվերով կամ միայն տառերով.

բ. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների միջև առկա է անհամապատասխանություն, սակայն տառերով կամ թվերով նշված գումարներից որևէ մեկի հանրագումարը համապատասխանում է ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարին.

գ. գնային առաջարկում չափաբաժնի համարը սխալ է նշված, սակայն գնման առարկայի անվանումը ճիշտ է լրացված.

դ. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ, ավելացված արժեքի հարկ և ընդհանուր գումար սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների լումարները կլորացված են մինչև հինգ տասնորդականը՝ դեպի ներքև ամբողջ թիվը, իսկ հինգ տասնորդական և դրանից ավելին՝ դեպի վերև ամբողջ թիվը.

ե. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակներում գումարները լրացված են ինչպես թվերով, այնպես էլ տառերով, և դրանք համապատասխանում են միմյանց, իսկ ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարի մեջ լրացված են ավելորդ բառեր, որի արդյունքում ստացվում է գոյություն չունեցող թիվ: Ընդ որում սույն պարբերության մեջ նշված դեպքում գնահատող հանձնաժողովը հայտը գնահատելիս հիմք է ընդունում ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով լրացված գումարների հանրագումարը.

զ. գնային առաջարկի սյունակներում տառերով լրացված գումարների մեջ լումաները նշված են թվերով:

Վերոհիշյալից ակնհայտ բխում է, որ «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի կողմից ներկայացրած հայտը՝ գնային առաջարկը, ենթակա չէր մերժման այն հիմքով, որ գնային առաջարկում առկա է անհամապատասխանություն տառերով և թվերով նշված գումարների միջև, քանի որ, նախ Հրավերի 5.2. կետի դ) ենթակետը թույլ է տալիս կատարել լումաների կլորացումներ, և ամենակարևորը, հայտը ենթակա չէ մերժման, եթե գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների միջև առկա է անհամապատասխանություն, սակայն տառերով կամ թվերով նշված գումարներից որևէ մեկի հանրագումարը համապատասխանում է ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարին, ինչը տվյալ դեպքում առկա է:

Գտնում ենք, որ նման պայմաններում գնահատող հանձնաժողովը չպետք է որպես հայտի մերժման հիմք դներ այն փաստը, որ գնային առաջարկում առկա է անհամապատասխանություն տառերով և թվերով նշված գումարմների մեջ:

Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունանալ նաև այն, որ հենց Պատվիրատուն, ներկայացված բողոքի վերաբերյալ իր դիրքորոշումը հայտնելուց, «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի հայտը մերժելու հիմքում դրել էր բացառապես շահույթի չափի գերազանցման փաստը:

3. Ներկայացված բողոքով և բողոքի թիվ 1 լրացումով «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ն արդեն իսկ ներկայացրել էր իր դիրքորոշումը 22 տոկոս շահույթի հիմքով ՍՊԸ-ի հայտը մերժելու վերաբերյալ:

Այս կապակցությամբ ցանկանում ենք լրացուցիչ փաստել, որ Ընթացակարգի ողջ հրավերում, այդ թվում նաև կցված Ծավալաթերթ-նախահաշվի օրինակելի ձևում բացակայում է որևէ նշում, որ գնային առաջարկում շահույթը չպետք գերազանցի 11 %:»:

Վերոգրյալով պայմանավորված, «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝

1. Պարտավորեցնել «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/88» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում՝ հանձնաժողովի 17.06.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության 7.10-րդ կետով կայացրած որոշումը դադարեցնելու վերաբերյալ:

2. Պարտավորեցնել «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/88» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում՝ «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի հայտը մերժելու մասով կայացրած որոշումը դադարեցնելու վերաբերյալ:

3. Պարտավորեցնել «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/88» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում՝ հանձնաժողովի 17.06.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության 7.10-րդ կետի առաջին և երրորդ պարբերություններում արձանագրված անհամապատասխանությունների մասով Կարգի 41-րդ կետի ուժով «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ից շտկում պահանջելու վերաբերյալ:

Միևնույն ժամանակ, Ընկերությունը Բողոքներ քննող անձին խնդրել է «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի կողմից 08.07.2020թ. ներկայացրած թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/81 բողոքով որոշում կայացնելիս՝ հիմք ընդունել վերջնական լրացմամբ ներկայացրած պահանջները:

4. <u>ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 08.07.2020թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/10306-2020 գրությամբ դիմել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունին՝

հնարավորություն տալով «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի կողմից 08.07.2020թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին:

Պատվիրատուն 11.07.2020թ.-ի թիվ 04.1/31.2/17649-20 գրությամբ, ներկայացնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված անհրաժեշտ փաստաթղթերը, հայտնել է նաև հետևյալը.

«Ի պատասխան Ձեր 2020թ հուլիսի 9-ի թիվ ԲՔԱ-ԼՕ/2/10306-2020 գրության կից ներկայացնում եմ «Տ-ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՓԲԸ-ի կողմից հուլիսի 8-ին, անգործության ժամկետի ավարտման վերջին օրը ժամը 18:39-ին ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացրած բողոքի վերաբերյալ պահանջվող փաստաթղթերը:

Միաժամանակ տեղեկացնում եմ Ձեզ, որ նախարարության կողմից 2020 թվականի հունիսի 17-ին գնանշման հարցման ընթացակարգով «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/88» ծածկագրով կազմակերպված կրթական օբյեկտների հիմնանորոգման աշխատանքների գնման գործընթացին 1-ին չափաբաժնի համար հայտ է ներկայացրել «Տ-ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՓԲԸ-ն, որը իր գնային առաջարկում շահույթի չափը հաշվարկել էր մոտ 22%, ինչը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես հրավերի Հավելված 6 պայմանագրի նախագծի 1.2 կետի պահանջներին, ըստ որի սահմանված աշխատանքները պետք է կատարվեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին համապատասխան: Ուստի գնահատող հանձնաժողովը մերժել է «Տ-ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՓԲԸ-ի հայտը, առաջնորդվելով ՀՀ կառավարության 23.06.2011թ N 879-Ն որաշմամբ հաստատված «Գործող գներով շինարարական աշխատանքների արժեքի հաշվարկման կարգի» 25-րդ կետով:»:

5. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2020/81 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից կրթական օբյեկտների (Երեվանի թիվ 105, Երևանի թիվ 94, Վանաձորի թիվ 17, Գյումրու թիվ 26, Տաշիրի, Իջևանի ավագ դպրոցներ) հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 09.06.2020թ.-ին հայտարարվել է «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/88» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, 1-ին չափաբաժնի մասով հայտ է ներկայացրել նաև «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ն:

iii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 17.06.2020թ.-ի թիվ 2 արձանագրության 26.06.2020թ.-ի նիստի 7.10-րդ կետի համաձայն՝ «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝

- Հավելված 1-ում սխալ է նշված պատվիրատուի անվանումը, բացակայում է իրական շահառու հանդիսացող անձի անուն, ազգանուն, հայրանունը, նույնականացման քարտի կամ անձնագրի կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը,
- Հավելված 2 գնային առաջարկում առկա է անհամապատասխանություն տառերով և թվերով նշված գումարների միջև:
- ներկայացված ծավալաթերթ-նախահաշիվը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին՝ պահպանված չէ հրավերով պահանջվող ձևաչափը, բացակայում են յուրաքանչյուր բաժնի ընդամենը գումարի չափը, ընդամենը կշիռը՝ տոկոսներով, ինչպես նաև ընդհանուր աշխատանքների ինքնարժեքի գումարը ներկայացված է որպես 3-րդ բաժնով նախատեսված աշխատանքների ընդամենը գումար,
- ծավալաթերթ-նախահաշվում, ինչպես նաև Հավելված 2՝ գնային առաջարկում ներկայացված մոտ 22% շահույթի չափը գերազանցում է հրավերով նախատեսված և քաղաքաշինական նորմերով՝ ՀՀ կառավարության 23.06.2011թ N 879-Ն որաշմամբ հաստատված «Գործող գներով շինարարական աշխատանքների արժեքի:

iv. Հանձնաժողովի 26.06.2020թ.-ի թիվ 2 արձանագրության 02.07.2020թ.-ի նիստի 12.4-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով նույն արձանագրության 7.10 կետը, որոշել է «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել՝ հրավերով սահմանված պահանջներին չհամապատասխանելու հիմքով:

6. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի կողմից 08.07.2020թ.-ին ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա բավարարման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք

հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Զարգացնելով վերոգրյալները՝ Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակը կլիներ ձևական, եթե դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի կազմակերպումը չլիներ տնտեսող, արդյունավետ և օգտավետ:

Այն է՝ ընթացակարգերի կազմակերպումը պետք է լինի՝

1. տնտեսող, այսինքն՝ նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար նախատեսված ռեսուրսների, ֆինանսական միջոցների մինիմալացմամբ՝ պահպանելով նախապես սահմանված որակը:

2. արդյունավետ, այսինքն՝ արդյունքի կամ նպատակի մասով պլանավորված և փաստացի վիճակների համեմատությունը: Նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար օգտագործված նյութական և ոչ նյութական միջոցների համարժեքությունը ձեռք բերված արդյունքին, երբ ապահովվում է կատարված ծախսի և Պատվիրատուի համար դրա օգտակարության միջև պատշաճ հարաբերակցությունը:

3. Օգտավետ՝ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակով դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի արդյունքի կամ նպատակի առավելագույն մակարդակի ապահովում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել նաև, որ իրավունքի սկզբունքները հիմնարար գաղափարներ են, որոնք արտահայտում են հասարակական կյանքի օբյեկտիվ օրինաչափությունները, ուղղակի կամ անուղղակի ամրագրվում են իրավական նորմերում, իրավական համակարգի հենասյունն են, կոչված են կարգավորելու հասարակական հարաբերությունները, ունեն համապարտադիրության հատկանիշ:

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ ենթակետի (օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները) համաձայն՝ գնման գործընթաց՝ գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն

ուղղված գործողությունների ամբողջություն, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ (21.05.2020թ.-ի թիվ 778-Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ շինարարական ծրագրերի գնման դեպքում մասնակիցը ներկայացնում է նաև իր կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվ, հաշվի առնելով հրավերին կցված ծավալաթերթով ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները: Ընդ որում կշիռները կիրառվում են մասնակցի առաջարկած ընդհանուր գնային առաջարկի նկատմամբ, նկատի ունենալով, որ շեղումը չի կարող ավել կամ պակաս լինել հրավերին կցված ծավալաթերթով տվյալ բաժնի համար սահմանված կշռի չափի տասը տոկոսից: Աշխատանքների բաժինները չեն կարող արհեստականորեն միավորվել կամ առանձնացվել:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը կամ դրանց մի մասը ներկայացված են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով և հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով

կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Հրավերի 4.3-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվ, հաշվի առնելով սույն հրավերին կցված ծավալաթերթով ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները: Ընդ որում կշիռները կիրառվում են մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի նկատմամբ, նկատի ունենալով, որ շեղումը չի կարող ավել կամ պակաս լինել սույն հրավերին կցված ծավալաթերթով տվյալ բաժնի համար սահմանված կշռի չափի տաս տոկոսից: Աշխատանքների բաժինները չեն կարող արհեստականորեն միավորվել կամ առանձնացվել:

Հրավերի 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում՝ Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 51-րդ և 52-րդ կետերի համաձայն՝ Պայմանագրի գինը կայուն է, եթե պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում, ապրանքները մատակարարվում և ծառայությունները մատուցվում են մինչև երեք տարվա ընթացքում: Եթե հրավերում և պայմանագրում նշված չէ, որ պայմանագրի գինը գործոնային է, ապա պայմանագրի գինը համարվում է կայուն՝ անկախ պայմանագրի կատարման ժամկետից:

Եթե պայմանագրի գինը կայուն է, ապա՝

1) մասնակցից չի կարող պահանջվել, որ նա ներկայացնի գնային առաջարկի հիմնավորումներ կամ որևէ այլ տիպի տեղեկություններ կամ փաստաթղթեր.

2) մասնակցի շահույթի չափը չի կարող հրավերով սահմանափակվել.

3) պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (ընտրված մասնակցի կամ պատվիրատուի) օգուտները (խնայողությունները) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են.

ՀՀ կառավարության 23.06.2011թ.-ի թիվ 879-Ն որոշմամբ հաստատված «Գործող գներով շինարարական աշխատանքների հաշվարկման» կարգի 4-րդ կետի համաձայն՝ սույն կարգը սահմանում է առանձին շենքերի և շինությունների շինարարության արժեքի ձևավորման հիմնական դրույթները, կառուցվածքն ու ծախսերի հաշվարկը:

Նույն կարգի 25-րդ կետի համաձայն՝ ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող շինարարության համար շահույթը սահմանել առավելագույնը 11 %:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից կրթական օբյեկտների (Երեվանի թիվ 105, Երևանի թիվ 94, Վանաձորի թիվ 17, Գյումրու թիվ 26, Տաշիրի, Իջևանի ավագ դպրոցներ) հիմնանորոգման

աշխատանքների ձեռքբերման նպատակով 09.06.2020թ.-ին հայտարարված «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/88» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով 1-ին չափաբաժնի մասով հայտ ներկայացրած «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝

- Հավելված 1-ում սխալ է նշված պատվիրատուի անվանումը, բացակայում է իրական շահառու հանդիսացող անձի անուն, ազգանուն, հայրանունը, նույնականացման քարտի կամ անձնագրի կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը,
- Հավելված 2 գնային առաջարկում առկա է անհամապատասխանություն տառերով և թվերով նշված գումարների միջև:
- ներկայացված ծավալաթերթ-նախահաշիվը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին՝ պահպանված չէ հրավերով պահանջվող ձևաչափը, բացակայում են յուրաքանչյուր բաժնի ընդամենը գումարի չափը, ընդամենը կշիռը՝ տոկոսներով, ինչպես նաև ընդհանուր աշխատանքների ինքնարժեքի գումարը ներկայացված է որպես 3-րդ բաժնով նախատեսված աշխատանքների ընդամենը գումար,
- ծավալաթերթ-նախահաշվում, ինչպես նաև Հավելված 2՝ գնային առաջարկում ներկայացված մոտ 22% շահույթի չափը գերազանցում է հրավերով նախատեսված և քաղաքաշինական նորմերով՝ ՀՀ կառավարության 23.06.2011թ N 879-Ն որաշմամբ հաստատված «Գործող գներով շինարարական աշխատանքների արժեքի:

Վերոնշյալով պայմանավորված՝ Հանձնաժողովը որոշել է «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի հայտը որոշել է «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել՝ հրավերով սահմանված պահանջներին չհամապատասխանելու հիմքով:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Հանձնաժողովը կիրառելով ՀՀ կառավարության 23.06.2011թ.-ի թիվ 879-Ն որոշմամբ հաստատված «Գործող գներով շինարարական աշխատանքների հաշվարկման» կարգի 25-րդ կետով սահմանված դրույթը գործել է ոչ իրավաչափ, խախտելով նույն կարգի 4-րդ և Կարգի 52-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված դրույթը, այն է՝ մասնակցի շահույթի չափը չի կարող հրավերով սահմանափակվել:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ ՀՀ կառավարության 23.06.2011թ.-ի թիվ 879-Ն որոշմամբ հաստատված «Գործող գներով շինարարական

աշխատանքների հաշվարկման» կարգը սահմանում է առանձին շենքերի և շինությունների **շինարարության արժեքի ձևավորման հիմնական դրույթները, կառուցվածքն ու ծախսերի հաշվարկը** (կարգի 4-րդ կետը), որի էությունից բխում է, որ այն վերաբերում է և նախատեսված է միայն նախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների համար, ուստի շահույթի նկատմամբ վերոգրյալ կարգով սահմանված պահանջները մասնակիցների կողմից ներկայացվող գնային առաջարկների համար կիրառելի չեն:

Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ ընթացակարգը հայտարարվել է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն:

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ եթե գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ…:

Վերոհիշյալ նորմից ակնհայտ է դառնում, որ եթե Ընթացակարգը կազմակերպվել է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, ապա մասնակիցների հայտով ներկայացրած գնային առաջարկը, ըստ էության, վերջնական չեն, և որպես կանոն, «վերանայվում է» գների նվազեցման նպատակով հրավիրված միաժամանակյա բանակցությունների ընթացքում, որպիսի պայմաններում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ Հանձնաժողովը ՀՀ կառավարության 23.06.2011թ.-ի թիվ 879-Ն որոշման 25-րդ կետով սահմանված դրույթները կարող էր կիրառեր գների նվազեցման շուրջ բանակցություններ կազմակերպելուց և մասնակիցների կողմից «վերջնական» գնային առաջարկներ ներկայացնելուց հետո, երբ պարզ լինեին մասնակիցների կողմից ներկայացված վերջնական գները:

Վերոնշյալների հետ կապված Բողոքներ քննող անձը, հարկ է համարում կրկին փաստել, որ Հանձնաժողովի կողմից վկայակոչված ՀՀ կառավարության 23.06.2011թ.-ի թիվ 879-Ն որոշմամբ հաստատված «Գործող գներով շինարարական աշխատանքների արժեքի հաշվարկման» կարգի 25-րդ կետը ամեն դեպքում կիրառելի չէ սույն ընթացակարգի շրջանակներում, այն, ինչպես վերը նշվեց, վերաբերում է և նախատեսված է միայն նախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների համար, ուստի շահույթի նկատմամբ վերոգրյալ կարգով սահմանված պահանջները մասնակիցների կողմից ներկայացվող գնային առաջարկների համար կիրառելի չեն, քանի որ կարգը

սահմանում է առանձին շենքերի և շինությունների **շինարարության արժեքի ձևավորման հիմնական դրույթները, կառուցվածքն ու ծախսերի հաշվարկը** (կարգի 4-րդ կետը):

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել, որ «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի կողմից 1-ին չափաբաժնի մասով Հավելված 2՝ գնային առաջարկում, ներկայացված մոտ 22% շահույթի չափի ՀՀ կառավարության 23.06.2011թ.-ի թիվ 879-Ն որոշմամբ հաստատված «Գործող գներով շինարարական աշխատանքների արժեքի հաշվարկման կարգի» 25-րդ կետով սահմանված՝ ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող շինարարության համար առավելագույն 11%-ից գերազանցելու հանգամանքը չէր կարող հանգեցնել «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/88» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշում կայացնելուն, որպիսի պայմաններում, Բողոքներ քննող անձը գտնում է, որ Հանձնաժողովի կայացված որոշումն այդ մասով ոչ իրավաչափ է և ենթակա դադարեցման:

Ինչ վերաբերում է Հանձնաժողովի 17.06.2020թ.-ի թիվ 2 արձանագրության 26.06.2020թ.-ի նիստի 7.10-րդ կետով՝ Ընկերության հայտին կից ներկայացված Հավելված 2-ում՝ գնային առաջարկում արձանագրված անհամապատասխանություններին, ապա Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել հետևյալը.

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ (10.10.2019թ.-ի թիվ 1422-Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ … մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, եթե գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների միջև առկա է անհամապատասխանություն, սակայն տառերով կամ թվերով նշված գումարներից որևէ մեկի հանրագումարը համապատասխանում է ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարին:

Նույնաբովանդակ դրույթ սահմանվել Ընթացակարգի Հրավերի 5.2-րդ կետի «բ» ենթակետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ (21.05.2020թ.-ի թիվ 778-Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ … մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, եթե գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում

տառերով կամ թվերով նշված գումարների միջև առկա է անհամապատասխանություն, սակայն տառերով կամ թվերով նշված գումարներից որևէ մեկի հանրագումարը համապատասխանում է ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարին:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից կրթական օբյեկտների (Երեվանի թիվ 105, Երևանի թիվ 94, Վանաձորի թիվ 17, Գյումրու թիվ 26, Տաշիրի, Իջևանի ավագ դպրոցներ) հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 09.06.2020թ.-ին հայտարարված «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/88» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով 1-ին չափաբաժնի մասով հայտ ներկայացրած «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի կողմից հայտով ներկայացված Հավելված 2-ում՝ գնային առաջարկում Հանձնաժողովն արձանագրել է տառերով և թվերով նշված գումարների միջև անհամապատասխանություն:

Ընկերության կողմից ներկայացված Հավելված 2-ի՝ գնային առաջարկի համաձայն՝

Չափա-բաժինների համարներ ը	**Աշխատանքի անվանումը**	**Ինքնարժեք /տառերով և թվերով/**	**Շահույթ /տառերով և թվերով/**	**ԱԱՀ** /տառերով և թվերով/**	**Ընդհանուր գինը /տառերով և թվերով/**
1	**2**	**3**	4	**5**	**6=3+4+5**
1	**Կրթական օբյեկտների հիմնանորոգում-1** «Տաշիրի Արտակ Խաչատրյանի անվան ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի սանհանգույցների և տանիքի (այդ թվում ինժեներական կոմունիկացիաների և շինարարական էլեմենտների) հիմնանորոգման և նորերի կառուցման աշխատանքներ	30,860,868.01 Երեսուն միլիոն ութ հարյուր վաթսուն հազար ութ հարյուր վաթսունութ ամբողջ մեկ հազար չորս հարյուր յոթանասուներկու հարյուրհազարերորդական	6,774,336.88 Վեց միլիոն յոթ հարյուր յոթանասունչորս հազար երեք հարյուր երեսունվեց ամբողջ ութսունութ հազար հարյուր քսանութ հարյուրհազարերորդական	7,527,040.98 Յոթ միլիոն հինգ հարյուր քսանյոթ հազար քառասուն ամբողջ ինը հազար յոթ հարյուր իններսուներկու տասհազարերորդական	45,162,245.88 Քառասունհինգ միլիոն հարյուր վաթսուներկու հազար երկու հարյուր քառասունհինգ ամբողջ ութ հազար յոթ հարյուր հիսուներկու տասհազարերորդական

Վերոնշյալ իրավական նորմերի՝ դրանց գործում առկա փաստական հանգամանքների հետ համադրման արդյունքում, Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ Ընկերության հայտով ներկայացրած Հավելված 2-ի՝ գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակներում թեև առկա է տառերով և թվերով նշված գումարների միջև անհամապատասխանություն, սակայն տառերով նշված գումարների հանրագումարը՝ ներառյալ լումաների գումարը, համապատասխանում է ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարին, որպիսի պայմաններում «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/88» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով 1-ին չափաբաժնի մասով հայտ ներկայացրած «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի կողմից հայտով ներկայացված Հավելված 2-ում՝ գնային առաջարկում տառերով և

թվերով նշված գումարների միջև անհամապատասխանություն արձանագրելով, Հանձնաժողովը գործել է ոչ իրավաչափ, քանի որ, ինչպես ամրագրված է Կարգի 32-րդ կետով, այդ հիմքով մասնակցի հայտն ենթակա չէր մերժման:

Անդրադառնալով Հանձնաժողովի 17.06.2020թ.-ի թիվ 2 արձանագրության 26.06.2020թ.-ի նիստի 7.10-րդ կետի 1-ին և 3-րդ պարբերություններով արձանագրված անհամապատասխանություններին, ապա Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն՝ հայտում ներառվող միայն մեկ փաստաթղթի՝ գնային առաջարկի համար, ընդ որում՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հայտում ներառվող փաստաթղթերում արձանագրված անհամապատասխանություններն ենթակա են շտկման, ուստի Բողոքներ քննող արձանագրում է, որ տվյալ դեպքում գնահատող հանձնաժողովի կողմից կիրառելի է Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջները:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/88» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, կայացնելով «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի հայտը Ընթացակարգի հրավերով նախատեսված պայմաններին անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշում, գործել է ոչ իրավաչափ՝ խախտելով Կարգի 41-րդ կետի դրույթներով սահմանված պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի դրույթներով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի կողմից 08.07.2020թ.-ին ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/81 ծածկագրով բողոքը բավարարել ամբողջությամբ:

1. Պարտավորեցնել «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/88» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝

- դադարեցնել՝ 17.06.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 7.10-րդ կետով՝ «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի հայտը մերժելու մասին կայացրած որոշումը,

- ընդունել՝ հանձնաժողովի 17.06.2020թ. նիստի թիվ 2 արձանագրության 7.10-րդ կետի 1-ին և 3-րդ պարբերություններում արձանագրված անհամապատասխանությունները շտկելու մասին որոշում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**